

08.09.2021թ.

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի << Դարբասի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի /22 ժամ /, ֆիզկուլտուրայի /6 ժամ/ ուսուցչի թափուր տեղերի համար:

Ռուսաց լեզվի, ֆիզկուլտուրայի ուսուցչի թափուր տեղերի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլերով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝  
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2. Փաստաթուղթ (դիմում)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձև 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին, աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են հրապարակման օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերի՝ Դարբասի միջնակարգ դպրոցում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա փաստաթղթերի ընդունման ավարտից ոչ ուշ քան , 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում ժամը 14:00-ին Դարբասի միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ գ. Դարբաս:

Տեղեկությունների համար զանգահարել 093110267 հեռախոսահամարով:

